DOI: 10.54503/978-9939-9312-5-8-283

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

ԼԻԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ
ԼԻԼԻԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ներածություն: Աշխատուժի միջազգային միգրացիան այսօր համաշխարհային տնտեսության հիմնական գործընթացներից մեկն է, որն էական ազդեցություն ունի ոչ միայն առանձին երկրների, այլև ամբողջ տարածաշրջանների տնտեսական համակարգերի վրա: Այն առանձնահատուկ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) համար, որը գտնվում է միգրացիոն հոսքերի ակտիվ խաչմերուկում: Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, դարձել է որպես միգրացիայի թե՛ տարանցիկ, թե՛ նպատակային կետ, ինչը ստեղծել է նոր տնտեսական հնարավորություններ, սակայն նաև կառավարման լուրջ մարտահրավերներ:

Հոդվածի նպատակն է բացահայտել վերջին տարիների տնտեսական քաղաքական իրավիճակների ազդեցությունը միգրացիոն հոսքերի վրա դեպի Հայաստան և Հայաստանից: Առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- բացահայտել աշխատանքային միգրացիայի առաջացման պատճառներն ու հետևանքների ազդեցությունը ՀՀ աշխատաշուկայի վրա,
- վերլուծել ՀՀ միգրացիայի վերաբերյալ պաշտոնական վիճակագրական ցուցանիշները, ՀՀ զարգացման գերակայությունները և միգրացիոն քաղաքականության արդի վիճակը:

Գրականության ակնարկ: Միգրացիոն գործընթացների շրջանակում առանձնահատուկ նշանակություն ունի աշխատանքային միգրացիան, որը լայնորեն ուսումնասիրվել է ակադեմիական գրականության մեջ[1]: Ամենահայտնի շրջանակներից մեկը հրում-քաշման տեսությունն է, որը մշակվել է Դուգլաս Մասսեի կողմից 1993 թվականին[2]: Համաձայն այս տեսության, միգրացիայի վրա ազդում են ինչպես խթանող գործոններ (օրինակ՝ տնտեսական անկայունությունը, գործազրկությունը և քաղաքական անկայունությունը հայրենի երկրում), այնպես էլ գրավչության գործոնները (ինչպիսիք են

[1]Galstyan A..,Labor market developments in the republic of Armenia, Journal of Yerevan University. Economy 2025, p.48-58 https://doi.org/10.46991/BYSU.G/2025.16.1.048

[2] Massey, D. S., J. Arango, G. Hugo, A. Kouaouci, A. Pellegrino, and J. E. Taylor., «Theories of international migration: A review and appraisal. Population and Development Review», (1993)https://www.researchgate.net/publication/270203247_Theories_of_International_Migration_A_Review_and_Appraisal վերջին մուտքը 19.08.25

աշխատանքի հնարավորությունները, բարձր աշխատավարձերը և նպատակակետ հանդիսացող երկրում բարենպաստ կենսապայմանները) [3]:

Համաձայն նորդասական տնտեսագիտության աշխատանքային միգրացիան հիմնականում պայմանավորված է երկրների միջև աշխատավարձերի տարբերություններով: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ) փաստագրել է, որ աշխատանքային միգրացիան Հայաստանի վրա ունի ավելի լայն սոցիալ-տնտեսական ազդեցություններ: Մասնավորապես, նշվում է, որ տրանսֆերտները կարևոր դեր են խաղում աղքատության նվազեցման գործում, հատկապես հաշվի առնելով, որ աղքատությունը Հայաստանում միգրացիան խթանող առանցքային գործոններից է[4]:

2022 թվականին ռուս-ուկրաինական հակամարտության սրումը զգալի ազդեցություն է թողել Հարավային Կովկասի տարածաշրջանի, այդ թվում՝ Հայաստանում միգրացիոն գործընթացի վրա[5]:

Ըստ ՄԱԿ-ի միգրանտների ժամանումը Հայաստան բաժանվել է մի քանի էտապների: Առաջին միգրանտների ալիքը ներառում էր այն անձանց, ովքեր փորձել են խուսափել տնտեսական անկայունությունից և գտնել անվտանգ պայմաններ: Երկրորդ ալիքը ձևավորվել է մի քանի ամիս անց, երբ ռազմական գործողությունները խորացան և սկսվեց զորակոչը, ինչը բազմաթիվ մարդկանց դրդեց լքել երկիրը[6]:

Միգրացիոն ներհոսքը Հայաստանին պատճառել է մի շարք տնտեսական և սոցիալական հետևանքներ՝ բնակարանային պահանջարկի աճ, կյանքի ծախսերի բարձրացում և աշխատաշուկայի վերակազմավորում[7]:

---

[3]Մելքումյան Ա.,Գրիգորյան Է., Զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ SS ոլորտում., Բանբեր ՀՊՏՀ, 2019. էջ 9-16
https://arar.sci.am/dlibra/publication/295289/edition/270981?language=en վերջին մուտքը 19.08.25

[4] OECD–CRRC Armenia-ի զեկույցը «Interrelations between Public Policies, Migration and Development in Armenia»., 2025
https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2017/05/interrelations-between-public-policies-migration-and-development-in-armenia_g1g787a4/9789264273603-en.pdf?utm_source=chatgpt.com, վերջին մուտքը 19.08.25

[5] Assessing the Impact of Russia's War against Ukraine on Eastern Partner Countries», բաժին՝ «Publications»,«oecd.org», «2023
https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2023/01/assessing-the-impact-of-russia-s-war-against-ukraine-on-eastern-partner-countries_3fdf0591/946a936c-en.pdf
վերջին մուտքը 19.08.25

[6]«Վերադարձի և վերաինտեգրման հաստատություն» (ՎՎՀ / Return and Reintegration), "Հայաստան վերադարձածների վերաինտեգրման ուղեցույց",2021թ.
https://armenia.un.org/sites/default/files/2021-07/reintegration-guide-arm_0.pdf

[7]Ավետիսյան Թ., Թորոսյան Ա., Մաթևոսյան Դ., ՀՀ-ում երիտասարդների արտագաղթի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, մակրոտնտեսական ցուցանիշների հետ փոխառնչությունների գնահատումը, ՀՊՏՀ, Տնտեսագետ,2(2), 2023.,էջ143-164

Հետազոտության մեթոդաբանություն։ Հետազոտության ժամանակ օգտագործվել են ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային տվյալներ՝ ներառյալ պաշտոնական միգրացիայի վիճակագրությունը, ՀՀ ՎԿ կայքից տվյալներ, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) և Համաշխարհային բանկի միգրացիայի պաշտոնական վիճակագրության տվյալները, որը հնարավորություն է տվել գնահատել միգրացիոն հոսքերը, տրանսֆերտների ստացման և փոխանցման մակարդակները, ՀՆԱ-ն և ՀՆԱ-ի արտադրությունը ըստ գործունեության տեսակների և աշխատաշուկայի փոփոխվող միտումները։

Հորիզոնական վերլուծության մեթոդը կիրառվել է միգրացիայի վիճակագրության տարբեր ժամանակահատվածների համեմատական վերլուծության համար՝ բացահայտելու միգրացիոն օրինաչափությունների զարգացման հիմնական միտումները և դրանց ազդեցությունը Հայաստանի տնտեսական միջավայրի վրա։

Ուղղահայաց վերլուծության մեթոդը հնարավորություն է տվել դիտարկել տարբեր գործոնների փոխազդեցությունը միգրացիոն գործընթացների վրա։

Ինդուկցիոն մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել են առանձին դեպքեր և կոնկրետ միգրացիոն երևույթներ, իսկ դեդուկցիոն մեթոդի միջոցով վերլուծվել են Հայաստանում տեղի ունեցող միգրացիոն գործընթացները։

Մեթոդաբանության բաժնում իր առանձնահատուկ տեղն ունեն աղյուսակների, գծապատկերների, նկարագրական, համադրման մեթոդները։

Վերլուծություն։ Հայաստանի Հանրապետության միգրացիայի իրավիճակի գնահատման աղբյուր է միգրացիոն հոսքերի վիճակագրությունը։ ՀՀ-ում միգրացիայի չափը որոշվում է, ոստիկանության բաժնի կողմից բնակչության դուրս գրման և հաշվառման տվյալների հիման վրա։ Միջազգային միգրացիայի գնահատման հիմք է՝ սահմանային հատման տվյալները։

Աշխատանքային միգրացիան երկրի վրա թողնում է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն։

Միգրացիայի չափերի մեծությունից է կախված դրսից դրամական հոսքերը։ Տրանսֆերտները համարվում են աշխատանքային միգրացիայի դրական կողմերից մեկը, որը նվազեցնում է աղքատության մակարդակը և նպաստում տնտեսության կայունացմանը։ 2022 թվականին ռուս-ուկրաինական հակամարտության բռնկումը կտրուկ փոխեց տարածաշրջանի միգրացիոն հոսքերի դինամիկան։ Մինչ հակամարտության սկիզբը Հայաստանը արդեն ուներ աշխատանքային միգրացիայի երկարատև պատմություն, որի շրջանակներում հազարավոր հայ քաղաքացիներ, հիմնականում ՌԴ-ում, զբաղվում էին աշխատանքային գործունեությամբ։ Այնուամենայնիվ, 2022 թվականից հետո միգրացիոն միտումներում արձանագրվեց զգալի տեղաշարժ. Հայաստան սկսեցին մեծ թվով ներգաղթել ռուս և ուկրաինացի միգրանտներ, ինչը փոխեց նաև երկրի ներսում ձևավորված աշխատանքային միգրացիայի կառուցվածքը և ուղղությունները։

Մինչև ռուս-ուկրաինական հակամարտության բռնկումը, Հայաստանի աշխատանքային միգրացիոն հոսքերը հիմնականում բնութագրվում էին արտահոսքի գերակշռությամբ: Այս միգրացիոն գործընթացի խորությունն ու դինամիկան առավել ամբողջական պատկերացնելու նպատակով անհրաժեշտ է վերլուծել 2013-2023 թվականներին Հայաստանի սահմանային անցումների տարեկան փոփոխությունները՝ զուգահեռաբար հաշվարկելով նաև սահմանային անցումների մնացորդը (տես՝ գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Սահմանային անցումների տարեկան դինամիկայի թիվը 2013-2023 թթ. (հազար մարդ)[8]

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ում սահմանային անցումների մնացորդը 2013-2017 թվականներին եղել է բացասական, ինչը նշանակում է, որ ընթացքում ելքերը գերազանցել են մուտքերը: Արդեն 2017 թվականից սկսված նկատում ենք միգրացիոն իրավիճակի որոշակի բարելավում:

2020 թվականից միգրացիոն դինամիկայում տեղի են ունեցել կտրուկ փոփոխություններ՝ պայմանավորված COVID-19 համաճարակով: Սահմանների

[8]Գրաֆիկը կառուցվել է հեղինակների կողմից օգտվելով՝ «Republic of Armenia summarized migration profile», էջ՝ 5 https://reintegrationfacility.eu/wp-content/uploads/2023/12/English-EMP_2022.pdf,: (բացված՝ 27. 02. 2025):
Նաև՝ «Հրապարակումներ ըստ տարիների 2017-2024թթ», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2017-2024», «Միգրացիա» https://armstat.am/am/?nid=82 (բացված՝ 27. 02. 2025):

փակման արդյունքում միգրացիոն հոսքերը նվազեցին մոտ հնգակի չափով, չնայած դրան, այդ ժամանակահատվածում սահմանային անցումների մնացորդը դրական էր:

2021 թվականին համավարակի սոցիալ-տնտեսական հետևանքների պատճառով սահմանային անցումների սալդոն դարձավ բացասական:

2022 թվականին ռուս-ուկրաինական հակամարտությունը հանգեցրեց նրան, որ 100,000 ՌԴ քաղաքացիներ տեղափոխվեցին Հայաստան, որոնց մեծ մասը ՏՏ և ֆինանսական ոլորտների մասնագետներ էին:

2023 թվականին սահմանային անցումների մնացորդը կրկին դարձավ բացասական՝ պայմանավորված որոշ օտարերկրյա քաղաքացիների՝ մասնավորապես ռուս և ուկրաինացի միգրանտների՝ երկրից հեռանալու միտումով: Նրանցից շատերը դժվարացել էին ինտեգրվել Հայաստանի միջավայրին և ընտրել էին այլ երկրներ կամ վերադարձ հայրենիք:

Քննարկելով միգրացիոն հոսքերը, անհրաժեշտ է անդրադառնալ նաև միգրանտների տարիքային խմբերին: Վիճակագրական տվյալները վկայում են, որ միգրանտների շուրջ 90%-ը (տես՝ գծապատկեր 2) գտնվում են աշխատունակ տարիքում՝մինչև 2020 թվականը ՀՀ-ում սահմանվել էր 15-75 տարիքային միջակայքը՝ օրենքով սահմանված 16-62 տարեկան աշխատանքային տարիքի համեմատ: Սկսած 2020 թվականից տարիքային վերին շեմ չի սահմանվել՝ հաշվի առնելով չափահաս և տարեց բնակչության աշխատանքային գործունեության համապարփակ լուսաբանման անհրաժեշտությունը՝ հետևելով աշխատաշուկայում բնակչության հնարավոր ծերացմանը[9]: Պարզ է դառնում, որ այս տարիքային խմբում ընդգրկված անձանց զգալի մասը միգրացիոն շարժերի շրջանակներում կամ մշտական բնակության և աշխատանքի նպատակով մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն, կամ հակառակը՝ մեկնում է այլ երկրներ (գծապատկեր 2):

2022-2023 թվականներին Հայաստան հիմնականում մուտք են գործել միջին տարիքային խմբի անձինք, ինչը ենթադրում է, որ երկիր են ժամանել նոր, երիտասարդ և մասնագիտացված աշխատուժի ներկայացուցիչներ, որը նպաստել է աշխատաշուկայի զարգացմանը՝ լրացնելով այն որակյալ և հմուտ մասնագետներով տարբեր տնտեսական ոլորտներում: Նաև նկատվել է մանկահասակ և դեռահաս երեխաների մուտքի աճ, հատկապես 2023 թվականին, ինչը պայմանավորված է 2022 թվականին տեղափոխված միգրանտների արդեն հաստատված կենսակերպով: Այս խումբը, ձեռք բերելով կայունության զգացողություն, հնարավորություն է ստացել տեղափոխել նաև իրենց ընտանիքի անդամներին:

Կարևոր է անդրադառնալ նաև ռուս-ուկրաինական պատերազմից առաջ և հետո Հայաստան մուտք գործած և Հայաստանից հեռացած ռուսների և ուկրաինացիների թվաքանակին:

---

[9]«Աշխատանքային ռեսուրսներ», էջ՝ 41, https://armstat.am/file/article/lab_market_2023_1.pdf, (բացված՝ 27. 02. 2025):



Գծապատկեր 2. ՀՀ սահմանային գրանցումներն ըստ տարիքային խմբերի 2013-2018 և 2019-2023թթ.(հազար մարդ)[10]

Հոդվածում միգրացիոն մուտքերի և ելքերի վերլուծությունն իրականացվել է բացառապես ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում՝ ընդգրկելով միայն Ռուսաստանի և Ուկրաինայի քաղաքացիների տեղաշարժի տվյալները՝ պատերազմի նախորդող և հետագա ժամանակաշրջաններում:

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 3-ը, Ռուսաստանից Հայաստան միգրացիոն հոսքերը զգալիորեն գերազանցում էին Ուկրաինայից միգրացիոն

[10] Աղյուսակը կառուցվել է հեղինակների կողմից օգտվելով՝ armstat.am-ից, «Հրապարակումներ ըստ տարիների 2017-2024 թթ», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2017-2024», «Միգրացիա»: https://armstat.am/am/?nid=82 (բացված՝ 27.02.2025):

հոսքերը: Նախապատերազմական տարիներին միգրացիոն շարժը դրսևորել է աստիճանական աճի միտում, որի ընթացքում մուտքերի քանակը միշտ գերազանցել է ելքերի քանակին՝ և՛ Ռուսաստանի, և՛ Ուկրաինայի քաղաքացիների դեպքում: Սակայն 2020 թվականին, COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի պատճառով, միգրացիոն պատկերը կտրուկ փոխվեց՝ Ռուսաստանի քաղաքացիների մուտքերի թիվը նվազեց մոտ վեց անգամ: Այդ տարում առաջին անգամ արձանագրվեց իրավիճակ, երբ միգրացիոն ելքերը գերազանցեցին մուտքերը:



Գծապատկեր 3. Մուտքերի ու ելքերի սահմանային գրանցումներն ըստ անձանց կողմից ներկայացված փաստաթղթերի:[11]

2021 թվականին Հայաստան մուտք գործած Ռուսաստանի քաղաքացիների թիվը կազմել է մոտ 500 հազար, ինչը գրեթե 17 անգամ գերազանցում է նույն տարում Հայաստան այցելած ուկրաինացիների թվին: Սակայն 2022 թվականին՝ ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո, Ռուսաստանի քաղաքացիների մուտքի ցուցանիշները կտրուկ աճեցին՝ գրանցելով 127% աճ նախորդ տարվա համեմատ՝ հասնելով 1 միլիոն 129 հազարի, որի պատճառներից մեկն այն էր, որ Ռուսաստանի Դաշնության

[11]Գրաֆիկները կառուցվել են հեղինակների կողմից օգտվելով՝ armstat.am, «Հրապարակումներ ըստ տարիների 2024», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու,2024», «Միգրացիա» էջ՝ 164 https://armstat.am/file/article/demog_2024_7.pdf, (բացված՝ 25. 03. 2025),
«Հրապարակումներ ըստ տարիների 2024», «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021», «Միգրացիա» էջ՝ 164 https://armstat.am/file/article/demog_2024_7.pdf (բացված՝ 25. 03. 2025):

քաղաքացիներից շատերը փորձեցին խուսափել ռազմական մոբիլիզացիայից և ապաստան գտնել ավելի ապահով երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Այս ցուցանիշը իր մեջ ներառում է նաև ՌԴ քաղաքացիություն ունեցող հայեր, ովքեր խուսափելով մոբիլիզացիայից վերադառնում էին ՀՀ: Նշված ժամանակահատվածում ուկրաինացի քաղաքացիների ներհոսքն աճել է 10%: Հարկ է նշել, որ երկու երկրների քաղաքացիների արտահոսքի ցուցանիշները 2022 թվականին ավելի փոքր էին ներհոսքի ցուցանիշներից, ինչը վկայում է, որ զգալի մասը շարունակել ապրել և աշխատել Հայաստանում:

2023 թվականին Ռուսաստանի քաղաքացիների թիվը կրկին աճեց՝ այս անգամ գրեթե 50%-ով: Սակայն արդեն միգրացիոն ելքերի ցուցանիշները ավելի բարձր էին, քան նախորդ տարի, ինչը, հնարավոր է, պայմանավորված էր՝ Հայաստանի տնտեսական իրավիճակով, միգրանտների համար այլ երկրների կողմից առաջարկվող նոր հնարավորություններով և ներգաղթյալների վերաինտեգրման բարդություններով: Ուկրաինացիների տեղաշարժի ցուցանիշները 2023 թվականին փոփոխվեցին շուրջ 20%-ով:

Հակամարտությունը էականորեն խաթարեց միգրացիոն ավանդական ուղիները: Եթե նախկինում հայ միգրանտները հիմնականում Ռուսաստանն էին դիտարկում որպես աշխատանքի տեղավորման հիմնական ուղղություն, ապա տնտեսական պատժամիջոցները և աշխատուժի կրճատումը Ռուսաստանում ստիպեցին շատերին վերանայել իրենց տարբերակները: Որոշ հայեր այլընտրանքային աշխատանք փնտրեցին Եվրոպայում, իսկ մյուսները նախընտրեցին մնալ Հայաստանում՝ օգտվելով օտարերկրյա բիզնեսների և ներդրումների ներհոսքի շնորհիվ ստեղծված բարենպաստ աշխատանքային հնարավորություններից:

Աշխատանքային միգրացիան երկար ժամանակ կարևոր տնտեսական գործոն է եղել Հայաստանի համար, քանի որ դրամական փոխանցումները ձևավորել են երկրի ՀՆԱ-ի զգալի հատվածը: Մասնավորապես, Հայաստանը պատմականորեն մեծապես հենվել է տրանսֆերտների վրա, որոնք կազմել են ՀՆԱ-ի մոտ 10%-ը: Այդ փոխանցումների զգալի մասը հայ միգրանտները ուղարկում էին Ռուսաստանից: Այնուամենայնիվ, պատերազմի և տնտեսական պատժամիջոցների հետևանքով Ռուսաստանում աշխատանքի տեղավորման հնարավորությունների կրճատումը հանգեցրեց տրանսֆերտների ներհոսքի փոփոխություններին:

Հրապարակված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ թեև 2022 թվականին Ռուսաստանից դրամական փոխանցումները նվազել են 15%-ով (տես՝ գծապատկեր 4.), Հայաստանում տնտեսական ակտիվության աճը՝ պայմանավորված նոր ռուսական բիզնեսների մուտքով, մասամբ փոխհատուցել է այդ կորուստները: Տեղական տնտեսության այս վերակառուցումը նպաստեց նոր աշխատատեղերի ստեղծմանը, հատկապես բարձր տեխնոլոգիաների, ֆինանսների և ծառայությունների ոլորտներում, ինչն իր հերթին մեղմեց

տրանսֆերտների նվազման բացասական ազդեցությունը երկրի ընդհանուր տնտեսական զարգացման վրա:



Գծապատկեր 4. «Արտերկրից» ստացված և փոխանցված ընթացիկ տրանֆերտները: (մլն. դրամ)[12]

Ինչպես նկատում ենք գծապատկերից թե՛ ստացված, թե՛ փոխանցված ընթացիկ տրանսֆերտները տարիներ շարունակ տատանվել են: Սակայն ընդհանուր առմամբ օրինաչափությունն անփոփոխ է մնացել արտերկիր փոխանցվող տրանսֆերտների համար, որոնք միջինում 2-3 անգամ պակաս են եղել ստացվող տրանսֆերտներից:

2020 թվականին նկատվում ենք ստացվող տրանսֆերտների կտրուկ աճ՝ մոտ 34%-ով, մինչդեռ փոխանցվող տրանսֆերտները նվազել են շուրջ 7.8%-ով: 2021 թվականին փոխանցվող տրանսֆերտներն առաջին անգամ զգալի աճ են գրանցել՝ մոտ 30%-ի սահմաններում, պայմանավորված COVID-19 համավարակով և 44-օրյա պատերազմով, իսկ 2022 թվականին՝ աճը կազմել է 55%:

Ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով միգրանտների անսպասելի հոսքը խորը տնտեսական հետևանքներ ունեցավ՝ ազդելով զբաղվածության մակարդակի, աշխատավարձերի և ընդհանուր տնտեսական կայունության վրա: Համաձայն Համաշխարհային բանկի 2023 թվականին հրապարակած զեկույցի Հայաստանի տեխնոլոգիական արդյունաբերությունը գրանցել է զբաղվածության հնարավորությունների 25% աճ՝ պայմանավորված ռուսական տեխնոլոգիական ընկերությունների և բարձր որակավորում ունեցող մասնագետների տեղափոխությամբ՝ նպաստելով նորարարությունների և տեխնոլոգիական զարգացմանը

2013 թվականից սկսած՝ ՀՆԱ-ն ցուցաբերել է աստիճանական աճ: 2013-2019 թվականների ընթացքում զգալի առաջընթաց է արձանագրվել շինարարության ոլորտում, ինչի հետևանքով զարգացել է նաև անշարժ գույքի

[12]Գրաֆիկը կառուցվել է հեղինակների կողմից օգտվելով՝ «Հայաստանի ազգային հաշիվները, 2017-2024 թթ», «Ազգային հաշիվների հիմնական ցուցանիշները», https://armstat.am/am/?nid=82&id=2694 (բացված՝ 25. 03. 2025):

շուկան: Նմանատիպ աճ է արձանագրվել նաև առողջապահության ոլորտում: Բավականին արագ տեմպերով զարգացել է նաև մշակույթի, զվարճանքների և հանգստի ոլորտը:

2020 թվականին՝ COVID-19 համավարակի և 44-օրյա պատերազմի հետևանքով, նկատվել է ՀՆԱ-ի զգալի նվազում, չնայած՝ տեղեկատվության և կապի ոլորտում՝ գրանցվել է 8.7% աճ, իսկ առողջապահական ոլորտում՝ մոտավոր 15% աճ: 2021 թվականին տնտեսությունը վերականգնման ուղի է մտել, և գրեթե բոլոր ոլորտներում արձանագրվել են աճի միտումներ:

2022 թվականին՝ ռուս-ուկրաինական պատերազմով և միգրացիոն հոսքերի աճով պայմանավորված ՀՀ ՀՆԱ-ն աճեց ավելի քան 20%-ով: Արդյունքում, 2022 թվականին տեղեկատվության և կապի ոլորտը աճեց 50%-ով: Միգրանտների ֆինանսական միջոցների տեղաշարժը դեպի ՀՀ բանկային համակարգ նույնպես մեծ ազդեցություն ունեցավ երկրի տնտեսության վրա, ինչի արդյունքում ֆինանսական և ապահովագրական ոլորտներն աճեցին 50%-ով: Սակայն տնտեսական այս ակտիվությունը առաջ բերեց որոշակի մարտահրավերներ, մասնավորապես՝ քաղաքային բնակավայրերում վարձակալության գների 40%-ով բարձրացման:

2023 թվականին ՀՆԱ-ն աճեց ավելի քան 11%-ով: SS ոլորտում գրանցվեց 33%-անոց աճ՝ նախորդ տարվա համեմատ: Անշարժ գույքի շուկան շարունակեց աճել՝ արձանագրելով 16% աճ: Շինարարության ոլորտում նույնպես նկատվեց դրական միտում: Ֆինանսական և ապահովագրական ոլորտը, թեև շարունակում էր աճել, բայց ավելի դանդաղ տեմպերով: Առողջապահական ոլորտում արձանագրվեց 12% աճ, ինչը մասամբ փոխհատուցեց նախորդ տարվա անկումը: Մշակույթի, զվարճանքների և հանգստի ոլորտն այդ տարի ևս պահպանեց աճի միտումը:

Ինչպես ներկայացված է գծապատկեր 5-ում, տարիներ շարունակ զբաղվածության ցուցանիշները որոշակի տատանումներ են արձանագրել՝ առանց հստակ աճի կամ նվազման կայուն միտման: Տարբեր ոլորտներում զբաղվածության փոփոխությունների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ ոլորտային մակարդակում ևս խոշոր տատանումներ չեն նկատվում:

Ընդհանուր առմամբ, զբաղվածության ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվում են շինարարության ոլորտում, որն աշխատուժի մեծ ներգրավվածությամբ առաջատարն է: Երկրորդ տեղում է առողջապահության և սոցիալական սպասարկման ոլորտը, իսկ երրորդ տեղում՝ այլ սպասարկման ծառայությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) և կապի ոլորտը մինչև 2019 թվականը զբաղվածների թվով գտնվում էր չորրորդ տեղում, սակայն 2019 թվականից սկսած այն սկսել է կայուն աճ գրանցել:

2018 թվականից շինարարական ոլորտը գրանցել է կտրուկ աճ, սակայն 2020 թվականին, համավարակի և տնտեսական սահմանափակումների հետևանքով, տարբեր ոլորտներում նկատվել են զբաղվածության միջին տարեկան ցուցանիշների զգալի փոփոխություններ: 2019 թվականի համեմատ

2020 թվականին զբաղվածության ընդհանուր ցուցանիշը նվազել է 2%-ով: Շինարարության ոլորտում զբաղվածների թիվը կրճատվել է 28%-ով, քանի որ այդ տարում բազմաթիվ շինարարական նախագծեր դադարեցվել էին: Միևնույն ժամանակ, ՏՏ և կապի ոլորտում գրանցվել է 13% աճ, ինչը պայմանավորված էր համավարակի ընթացքում հեռավար աշխատանքի պահանջարկի աճով:



Գծապատկեր 5. Զբաղվածները ըստ գործունեության տեսակի (միջին տարեկան / հազար մարդ)[13]

2021–2023 թվականներին Հայաստանում զբաղվածության մակարդակը շարունակել է աճել: 2021-ին այն վերականգնվել է գրեթե 3%-ով՝ պայմանավորված տնտեսական ակտիվացմամբ և աշխատատեղերի

[13]Գրաֆիկը կառուցվել է հեղինակների կողմից օգտվելով՝ «Հրապարակումներ», «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016-2024», «Աշխատանքի շուկա», https://armstat.am/am/?nid=82 (բացված՝ 25.03,2025):

վերաբացմամբ: Շինարարության ոլորտում գրանցվել է 28% աճ, մինչդեռ ՏՏ ոլորտում նկատվել է 13% անկում:

2022-ին զբաղվածությունն աճել է 4.2%-ով, ընդ որում ՏՏ ոլորտում արձանագրվել է 38%-անոց աճ՝ Հայաստան տեղափոխված մասնագետների շնորհիվ: Սպասարկման ոլորտում զբաղվածությունն աճել է 21.5%-ով՝ կապված նոր ձևավորված պահանջարկի հետ:

2023-ին զբաղվածության աճը կազմել է 3.4%: ՏՏ ոլորտում արձանագրվել է 7.1% աճ, իսկ շինարարության ոլորտում՝ 21.8%:

Չնայած աճին, որոշ ոլորտներ՝ հատկապես շինարարությունը և սպասարկումը, բախվել են աշխատուժի մրցակցության հետ: Հնդիկ աշխատողների ներհոսքը, որոնք հաճախ համարվում են ավելի էժան աշխատուժ, հանգեցրել է որոշ մասնագիտությունների աշխատավարձերի նվազման:

Միգրացիան ունեցել է նաև սոցիալական հետևանքներ: Կրթական համակարգը բախվել է նոր մարտահրավերների՝ կապված միգրանտ երեխաների ընդունման և ուսուցման պայմանների հարմարեցմամբ:

2023 թվականին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը ներկայացրել է աշխատանքի թույլտվության նոր կանոնակարգեր, որոնք մի կողմից պարզեցնում են օտարերկրյա աշխատողների ընդունման գործընթացը, իսկ մյուս կողմից՝ ուղղված են տեղական աշխատաշուկայի պաշտպանությանը:

Եզրակացություն: Բնակչության միջազգային միգրացիան աստիճանաբար դառնում է ավելի մեծ թվով երկրների սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն գործոններից մեկը: Միջազգային միգրացիան նպաստում է նաև աշխատանքային ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործմանը, փոխգործակցությանը, երկխոսությանը և տարբեր քաղաքակրթությունների փոխհարստացմանը:

Միգրացիայի դինամիկան Հայաստանում վերջին տարիներին կրել է զգալի փոփոխություններ, ինչը պայմանավորված է մի շարք գլոբալ և տարածաշրջանային գործոններով: Ռուս-ուկրաինական հակամարտության և համաճարակի հետևանքները զգալի ազդեցություն են թողել ինչպես ներգաղթի, այնպես էլ արտագաղթի ցուցանիշների վրա: Միգրացիոն հոսքերի աճը զգալի ազդեցություն ունեցավ ՀՀ տնտեսական ոլորտի մի շարք ասպեկտների վրա, ինչպիսիք են՝ ՀՆԱ, աշխատաշուկայի փոփոխություններ, տրանսֆերտներ, գների մակարդակի փոփոխություններ, և այլն:

Հոդվածում կատարված վերլուծությունները փաստում են, որ աշխատուժի միգրացիան որոշակի նշանակություն ունի Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքում՝ ինչպես հնարավորությունների, այնպես էլ մարտահրավերների առումներով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոն (ՄՔՄՄԿ / ICMPD), Հայաստանի ընդլայնված միգրացիոն պրոֆիլ, 2023թ.
2. «Վերադարձի և վերաինտեգրման հաստատություն» (ՎՎՀ / Return and Reintegration), “Հայաստան վերադարձածների վերաինտեգրման ուղեցույց”,2021թ.
3. Ավետիսյան Թ., Թորոսյան Ա., Մաթևոսյան Դ., ՀՀ-ում երիտասարդների արտագաղթի սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչները, մակրոտնտեսական ցուցանիշների հետ փոխառնչությունների գնահատումը, ՀՊՏՀ, Տնտեսագետ,2(2), 2023., էջ143-164
4. Մելքումյան Ա.,Գրիգորյան Է., Զբաղվածության հիմնախնդիրները ՀՀ ՏՏ ոլորտում.,Բանբեր ՀՊՏՀ 2019 , էջ 9-16
5. Comparative Migration Studies (SpringerOpen) — «The evolution of gendered migration trajectories from Moldova & Georgia», գիտական հոդված
6. Castles Stephen and Mark J. Miller., «The Age of Migration: International Population Movements in the Modern World» (4th edition), pages՝ 13-23
7. A. Galstyan.,Labor market developments in the republic of Armenia, Journal of Yerevan University. Economy 2025, p.48-58
8. Massey, D. S., J. Arango, G. Hugo, A. Kouaouci, A. Pellegrino, and J. E. Taylor., «Theories of international migration: A review and appraisal. Population and Development Review», (1993)
9. OECD–CRRC Armenia-ի զեկույցը «Interrelations between Public Policies, Migration and Development in Armenia»., 2025
10. ՀՀ ՎԿ, https://armstat.am/file/article/lab_market_2023, 2024
11. Assessing the Impact of Russia’s War against Ukraine on Eastern Partner Countries», բաժին՝ «Publications»,«oecd.org», «2023, https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2023/01/assessing-the-impact-of-russia-s-war-against-ukraine-on-eastern-partner-countries_3fdf0591/946a936c-en.pdf
12. OECD–CRRC Armenia-ի զեկույցը «Interrelations between Public Policies, Migration and Development in Armenia»., 2025, https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2017/05/interrelations-between-public-policies-migration-and-development-in-armenia_g1g787a4/9789264273603-en.pdf?utm_source=chatgpt.com,

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ՎՐԱ

ԼԻԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՌՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԱԿՅԱՆ
ԼԻԼԻԹ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Համառոտագիր

Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, դարձել է որպես միգրացիայի թե՛ տարանցիկ, թե՛ նպատակային կետ, ինչը ստեղծել է նոր տնտեսական հնարավորություններ, սակայն նաև կառավարման լուրջ մարտահրավերներ: Այս հետազոտությունը ձգտում է նպաստել աճող ակադեմիական և քաղաքական դիսկուրսին՝ գնահատելով այս միգրացիայի փոփոխության շրջանակը, բնութագրերը և սոցիալ-տնտեսական ազդեցությունը: Աշխատուժի արտահոսքը հանգեցնում է կադրային պակասի, նվազեցնում բիզնեսի արդյունավետությունն ու ներդրումային ակտիվությունը, ինչն իր հերթին թուլացնում է տնտեսական աճը և կարող է ապակայունացնել սոցիալ–տնտեսական միջավայրը: Խնդրի արդյունավետ կառավարումը պահանջում է ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության և համապատասխան ինստիտուցիոնալ կառույցների համակարգված և արագ արձագանքող քաղաքականություն:

Բանալի բառեր Աշխատուժի միգրացիա, տնտեսական, քաղաքական իրավիճակ, կայուն զարգացում

СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКИЕ ВОЗДЕЙСТВИЕ ТРУДОВОЙ МИГРАЦИИ НА РЫНКЕ ТРУДА РА

ЛИАНА АКОПЯН
РУЗАННА АМЕНАКЯН
ЛИЛИТ БАГДАСАРЯН

Аннотация

Армения, будучи страной с небольшой и открытой экономикой, стала одновременно транзитным пунктом и пунктом назначения для миграции, что создало новые экономические возможности, но и серьезные управленческие проблемы. Данное исследование призвано внести вклад в растущий академический и политический дискурс путем оценки масштабов, характеристик и социально-экономических последствий этих миграционных изменений. Отток рабочей силы приводит к нехватке кадров, снижает эффективность бизнеса и инвестиционную активность, что в свою очередь замедляет экономический рост и

может дестабилизировать социально-экономическую обстановку. Эффективное управление проблемой требует скоординированной и оперативной политики со стороны Министерства труда и социальных вопросов Республики Армения, Государственного агентства занятости и соответствующих институциональных структур.

Ключевые слова: Трудовая миграция, экономическая, политическая ситуация, устойчивое развитие.

THE SOCIAL-ECONOMIC CHALLANGES OF LABOR MIGRATION ON THE RA LABOR MARKET

LIANA HAKOBYAN
RUZANNA ARMENAKYAN
LILIT BAGHDASARAYN

Abstract

Armenia, as a small and open economy, has increasingly emerged as both a transit and destination country for migration. While these dynamics generated new economic opportunities, they also pose significant challenges for public administration and policy coordination. This study contributes to the expanding academic and policy debate by examining the scale, characteristics, and socio-economic implications of recent migration developments in Armenia.

Sustained labor outflows have resulted in workforce shortages, reduced business efficiency, and weakened investment activity. These effects, in turn, constrain economic growth and may undermine overall socio-economic stability. At the same time, unmanaged migration inflows place additional pressure on labor market institutions and social infrastructure.

Addressing these challenges requires a comprehensive and responsive policy framework. Effective migration management depends on close coordination among the Ministry of Labor and Social Affairs of the Republic of Armenia, the State Employment Agency, and other relevant institutional actors. Such coordination should aim to balance labor market needs, protect social cohesion, and enhance the contribution of migration to sustainable economic development.

Keywords: Labor migration, economic, political situation, sustainable development